ԳԱՌՆԻ ԳԱՎԱՌԸ 1590 Թ. ՕՍՄԱՆՅԱՆ ՀԱՐԿԱՑՈՒՑԱԿՈՒՄ

ԳԵՈՐԳԻ ՄԻՐԶԱԲԵԿՅԱՆ

Գառնի գավառի հարկացուցակը կարևոր սկզբնաղբյուր է ժողովրդագրության և սոցիալ-տնտեսական հարցերի ուսումնասիրության տեսանկյունից: Գառնիի աշխարհագիրը տեղեկություններ է հաղորդում գյուղերի քանակի, բնակչության էթնիկ կազմի, գանձվող հարկերի մասին և այլն: Գավառում հաշվվել է 42 գյուղ, որից 27-ում բնակչություն արձանագրված չէ: Ամենաշատ բնակեցված գյուղը եղել է Գառնին, որտեղ հիմնականում բնակվել են հայեր: Գյուղաբնակներն իշխանություններին վճարել են տարատեսակ հարկեր, որոնց մի մասը գանձվել է յուրաքանչյուր գյուղից:

Բանալի բառեր – Գառնի, Օսմանյան կայսրություն, Ռևան, հարկացուցակ, հարկեր, աքչե:

1590 թ. մարտի 21-ին Կոստանդնուպոլսում Օսմանյան կայսրության և Սեֆյան Իրանի միջև կնքված հաշտության պայմանագիրը թույլ տվեց Բարձր Դռանը իր տարածքներին կցել Այսրկովկասը և Ատրպատականը[1]: Այդպիսով, գրեթե 12 տարի շարունակվող պատերազմում օսմանցիներին հաջողվեց վստահորեն առավելության հասնել Արևելքի ոխերիմ հակառակորդի նկատմամբ:

Օսմանյան իշխանությունները, որպես կանոն, ռազմական հաջողությունների պայմաններում հնարավորինս արագ իրականացնում էին նոր շրջանների գրանցում: Բացառություն չէին նաև Երևանի (օսմաներեն բնագրում՝ Ռևան) վիլայեթի 1590 թ. հանգամանալից աշխարհագիր-ցուցակները[2]: Դրանք, աղբյուրագիտական մեծ արժեք ունենալով, ենթադրում են հիմնավորապես պարզել վարչական ներքին բաժանումները, հաշվառված մարդկանց քանակը, էթնիկական կազմը, քննել տնտեսական դրությունը, սահմանված հարկադրույքները և կարևոր այլ հարցեր:

Երևանի վիլայեթի անբաժան մաս է կազմել Գառնի գավառը[3], որն աշխարհագրում ներկայացվել է հետևյալ հերթականությամբ, նախ՝ նշվում է գյուղի անունը, որից հետո շարադրվում են հաշվառված մարդկանց անձնանունները, հարկ եղած դեպքում նրանց տիրապետած այգիները և այլ հողատա-

---

[1] **Զուլալյան Մ. Կ.,** Արևմտյան Հայաստանը XVI- XVIII դդ., Երևան, 1980, էջ 52:

[2] **Başbakanlik Osmanli Arşivi**, TT, 0633, Tapu Tahrir Defteri, 52.5 X 20, Numarali 394 (այսուհետև՝ BOA).

[3] BOA, էջ 200-212:

ռածքներ, այնուհետև՝ հարկատեսակները՝ իրենց դրամական արժեքներով, նշելով նաև ընդհանուր գումարը:

1590 թ. օսմանյան հարկացուցակի տվյալների համաձայն՝ Գառնին բաղկացած է եղել 42 գյուղից: Դրանց թվին են պատկանել Գառնի, Վերին Քիլան, Ներքին Քիլան, Գողթ, Գուրանջա[4], Ամարզիք, Քըզըլվանք, Ավանիք, Փեշրեղան, Դուբին[5], Քովայ, Արտաշիր[6], Իմանշալու, Քոյլահիսար, Քուշանջը, Ափաբաքլու, Թամամլու, Քըզըլ Ավա, Դոքուզ, Աղաջ Արի, Ալի Քարիք, Հարուն Բիրուն, Բիրանուս, Մուսա Հաջիլու, Չաթալար, Մուսթաֆալու, Աբդալմուսի, Նովրուզլու, Ալմալու, Փիր Ահմեդ Աբդալ, Ախուշվանք, Մանքուս, Քաղավազ, Բափաքիր, Մոլա Փոլադ, Յոլ Քեսին, Չանդարլար, Քարավելի Քըշլաղը, Աղչա Քըշլաք, Խեթաբթարա, Քազանլու[7] և Արնուս գյուղերը:

Հարկ է նշել, որ վերոնշյալ գյուղերից 27-ում որևէ բնակիչ արձանագրված չէ: Այդպիսի բնակավայրերից են եղել Ներքին Քիլանը, Ամարզիքը, Ավանիքը, Քովայը, Քոյլահիսարը, Քուշանջին, Ափաբաքլուն, Թամամլուն, Քըզըլ Ավան, Աղաջ Արին, Ալի Քարիքը, Հարուն Բիրունը, Բիրանուսը, Մուսա Հաջիլուն, Չաթալարը, Մուստաֆալուն, Փիր Ահմեդ Աբդալը, Մանքուսը, Բափաքիրը, Մոլա Փոլադը, Յոլ Քեսինը, Չանդարլարը, Քարավելի Քըշլաղըն, Աղչա Քըշլաքը, Խեթաբթարան, Քազանլուն և Արնուս գյուղերը:

Սրանց շրջանում լրացուցիչ հետաքրքրություն է առաջացնում Փիր Ահմեդ Աբդալ գյուղը: Հարկացուցակի տեղեկություններով գյուղը գտնվել է Գուրանջայի հարևանությամբ, ինչը կարևոր է նրանով, որ գավառում այլևս նման-օրինակ աշխարհագրական բնույթի գրություն չկա:

Հաջորդ ուշագրավ հատվածը վերաբերում է ամենաշատ բնակչությամբ աչքի ընկած գյուղերին, որոնց թվում առանձնացել է Գառնի գյուղը. այնտեղ նշված է 100 շունչ: Դրան հաջորդել է Թոփրաք Քալան՝ 32 գրանցված մարդկանցով: Ինչ վերաբերում է մնացյալ գյուղերում արձանագրված մարդկանց, ապա նրանց թիվը հիմնականում տատանվել է 10-ից 20-ի միջև:

Հարկացուցակը կարևոր սկզբնաղբյուր է նաև ազգաբնակչության էթնիկ կազմի ուսումնասիրության տեսանկյունից: Նյութի քննությունից պարզվում է, որ գավառում եղել են ինչպես այլադավաններ[8], այնպես էլ մահմեդա-

---

[4] Գյուղանվան ճշգրտումը հստակ չէ:

[5] Գյուղը հայտնի է եղել նաև Թոփրաք Քալա անվամբ (այսուհետև՝ Թոփրաք Քալա):

[6] Օսմաներեն բնագրում՝ Արդաշիր:

[7] Գյուղը հայտնի է եղել նաև Իսմանլու անվամբ:

[8] Այն բնորոշվել է «كبران»-«Գյաբռան» եզրույթով, որը վերաբերել է ոչ մահմեդաննե-

կաններ, որոնք հիմնականում բնակվել են առանձին գյուղերում: Բացառություն էր Գառնի գյուղը, որտեղ նշված են 96 հայ և 4 մահմեդական:

Հարկացուցակում սոսկ հայեր են արձանագրվել հետևյալ 4 գյուղում՝ Վերին Քիլանում (13 շունչ), Գողթում (10 շունչ), Գուրանջայում (9 շունչ) և Քըզըլվանքում (10 շունչ): Դրան հակառակ՝ միայն մահմեդականներով էր բնակեցված Փեշիխանը (16 շունչ), Թոփրաք Քալան (32 շունչ), Արտաշիրը (19 շունչ), Իմանշալուն (16 շունչ), Դոքուզը (11 շունչ), Աբդաբլուսին (7 շունչ), Նովրուզլուն (18 շունչ), Ալմալուն (11 շունչ), Քաղավազը (18 շունչ) և վերջապես Աղչա Քըշլաքը (13 շունչ):

Տվյալների հանրագումարից ստացվում է հաշվառված 138 հայ և 165 մահմեդական: Ելնելով այն փաստից, որ հայերի շրջանում որևէ ամուրի չի գրանցվել, կարելի է արձանագրել, որ եղել է նույնքան թվով հայ ընտանիք: Իրավիճակը տարբերվել է մահմեդականների շրջանում, որտեղ ընտանիքների թիվը հասել է 145-ի, քանի որ ընդհանուր հաշվառվածների շրջանում 20-ը ամուրիներ էին: Այդպիսով, չնչին առավելությամբ մահմեդականները գավառում մեծամասնություն են կազմել:

Գառնիի բնակչության շրջանում տարածված է եղել այգիների մշակությունը: Ընդհանուր առմամբ կարելի է հաշվել 151 այգի, ինչը բավական շատ էր՝ այն գյուղերի թվի համեմատությամբ, որոնց դիմաց հարկացուցակում բնակչություն է եղել արձանագրված: Ամենաշատ այգիները եղել են Գառնի գյուղում՝ 101 հատ: Հարկ է նշել, որ բացառությամբ նշված բնակավայրի և Թոփրաք Քալայի (6 այգի), այգիներն առկա են եղել միայն հայաբնակ գյուղերում: Բացի դրանից, արձանագրված են նաև 20-ից ավելի չիֆթ[9], 4 պարտեզ և 4 հողատարածք:

Աշխարհագրի հաջորդ հատվածը վերաբերում է հարկերին: Գյուղերից գանձվել են իսփենջի[10], չիֆթի, բեննաքի[11], դյոնումի, ցորենի, գարու, կորեկի,

---

ին: Անձնանունների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ խոսքը հայերի մասին է:

[9] Չիֆթ կամ չիֆթլիքն այն հողակտորն էր, որը մշակվել է մի զույգ եզան միջոցով: Երևանի վիլայեթում չիֆթի չափն ամենաբերրի հողերում կազմել է 80 դյոնում (1 դյոնումը՝ երկարությամբ և լայնությամբ՝ 40 քայլ), միջին արգասաբեր հողերում՝ 100 դյոնում, իսկ ոչ բերրի հողերում՝ 130 դյոնում: Այն բաժին էր հասնում միայն ամուսնացած մահմեդական տղամարդկանց:

[10] Հարկի տեսակ, որը վճարել են ոչ մահմեդական չափահաս տղամարդիկ:

[11] Հողագործ մահմեդականի՝ ֆեոդալին վճարած հարկերից մեկն է. կար երկու տեսակի բեննաք՝ էքինլու և ջաբա: Էքինլու բեննաքի հարկ էին վճարում այն հպատակները,

ոսպի, քաղցուի, բամբակի, բրնձի, այգիների, ինչպես նաև պարտեզների մուքաթիայի[12], փեթակի, բանջարանոցի, մրգի, խոտի, արոտի, ձմեռակացի, ոչխարների, դաշթիբանիի և հողի թափուի[13], հարիջի[14], բադհավայի[15] և հարսնության, ջրաղացների և ձիթհանների համար գանձվող տուրքերը:

Հարկ է նշել, որ յուրաքանչյուր գյուղից պահանջվել են իսփենջի կամ բեննաքի[16], ցորենի, գարու, փեթակի, բանջարանոցի, խոտի, արոտի, ձմեռակացի, ոչխարների, դաշտապահության և հողի թափուի, հարիջի, բադհավայի և հարսնության համար նախատեսված հարկերը, այնինչ մնացածները պայմանական բնույթ են կրել, ինչը պայմանավորված է եղել տվյալ բնակավայրի սոցիալ-տնտեսական հնարավորությամբ:

Օսմանյան իշխանությունների սահմանած տուրքերի շրջանում հատկապես կարևոր էր ցորենի, գարու, բամբակի, բրնձի մշակությունը, որոնց համար, դատելով վճարված բարձր հարկաչափերից, պայմանները նպաստավոր էին:

Ջրաղացների և ձիթհանների համար գանձվող միջոցները նույնպես կարևոր նշանակություն են ունեցել գավառի տնտեսության համար: Դրանք գավառում համապատասխանաբար 15-ը և 3-ն էին, որոնցից շահագործման ենթակա չէին մեկ ջրաղաց և նույնքան ձիթհան: Դրանց համար սահմանված հարկաչափը հստակ էր՝ ջրաղացներինը՝ 30-ական, ձիթհաններինը՝ 60 աքչե[17]:

Մեկ այլ ուշագրավ իրողություն, որը վերաբերում է տուրքերին, կապված է ընդհանուր հարկաչափերի տվյալներին: Նյութի քննությունից պարզվում է, որ ամենաբարձր հարկադրույքը գանձվել է մահմեդականաբնակ Աբդաբլուսի

որոնք ունեին կես չիֆթից պակաս հողակտոր, իսկ ջաբա բեննաքի հարկ վճարողները հող չունեին:

[12] Խոսքը բերքի հասույթի դիմաց միանվագ սահմանված վճարի մասին է:

[13] Հողաբաժին պահելու իրավունք, որը տալիս էր ֆեոդալ հողատերը: Դրա դիմաց գյուղացին պետք է վճարեր ֆեոդալին:

[14] Հարիջ էր կոչվում այն հպատակը, ով իր ֆեոդալի տիրույթներից դուրս մեկ այլ տեղ հող ուներ:

[15] Եկամտի լրացուցիչ աղբյուրների հետամուտ լինելով՝ օսմանցի կառավարիչները տուգանում էին գյուղացիներին: Բադհավան գանձվող տուգանքների և հարկի ընդհանուր անունն է:

[16] Պայմանավորված կրոնական և դասակարգային տարբերությամբ:

[17] Արծաթե դրամի միավոր: Օսմաներեն նշանակում է սպիտակավուն: Օսմանյան աքչեները հավասար էին մեկ քառորդ դիրհեմ արծաթի, իսկ դիրհեմը հավասար էր 3.06 գրամի:

գյուղից, որը գավառում աչքի է ընկել ամենաքիչ հաշվառված սակավաթիվ գյուղացիներով: Այդ գյուղի հարկի չափը կազմել է 70000 աքչե: Ինչ վերաբերում է ամենաքիչ գանձվող գյուղին, ապա դրա հարկաչափը կազմել է ընդամենը 1333 աքչե: Մյուս գյուղերի դրամաչափերը խիստ փոփոխական բնույթ են կրել:

Այսպիսով, ընթացիկ հարկացուցակն արժեքավոր տեղեկություններ է հաղորդում Գառնի գավառի ժողովրդագրական տվյալների մասին: Այն մասնավորապես հնարավորություն է տալիս վեր հանելու գավառի սոցիալ-տնտեսական պատկերը՝ բնակեցվածությունը՝ ըստ գյուղերի, և տեղեկանալ գյուղերից գանձվող հարկաչափերին:

ПРОВИНЦИЯ ГАРНИ В ОСМАНСКОМ НАЛОГОВОМ РЕЕСТРЕ 1590 ГОДА.

ГЕОРГИЙ МИРЗАБЕКЯН

Налоговый реестр провинции Гарни важный источник по исследованию демографических и социально-политических вопросов. Перепись Гарни предоставляет данные о количестве сел, этническом составе, взимаемых налогах и т.д. В провинции насчитывалось 42 села, из которых в 27-и не были зафиксировано жителей. Самое населенное село считалось Гарни, где в основном жили армяне. Жители сел провинции платили османским властям различные налоги, часть которых собиралась с каждого села.

Ключевые слова – Гарни, Османская Империя, Реван, налоговый реестр, налоги, акче.

THE GARNI PROVINCE ACOORDING TO IN THE 1590'S OTTOMAN TAX REGISTER

GEORGI MIRZABEKYAN

The tax register of Garni province is an important source for demographic and socio-economic issue studies. The census of Garni provides information on the number of villages, the ethnicity of the population, the taxes levied, etc. In this province, 42 villages were enumerated, of which 27 had no registered population. The most populated village was Garni, mostly by Armenians. The village population paid various taxes to the Ottoman authorities; a part of which was collected from village to village.

Key words – Garni, the Ottoman Empire, Revan, tax register, taxes, akçe.